

«ԲԱՂՐԱՄՅԱՆ ԲԻԼԴԻՆԳ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Բազմաբնակարան շենքերի կառուցում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Կատարող՝
«Քոնսեկոարդ» ՍՊԸ
Տնօրեն՝
Վ.Թևոսյան

Երևան - 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ	3
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	3
1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	3
1.3.1. Գործունեության ազդեցության գնահատումը	4
1.3.2. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ	6
1.3.3. Հողային աշխատանքներ	7
1.3.4. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	8
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	8
2.1. Տեղադիրքը	8
2.2. Կլիման	8
2.3. Մթնոլորտային օդ	11
2.4. Ջրային ռեսուրսներ	11
2.5. Հողային ռեսուրսներ	11
2.6. Կենսաբազմազանություն	12
2.7. Սոցիալ տնտեսական պայմանները	12
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	14
3.1. Ռիսկերի գնահատում	14
3.2. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	15
3.2.1. Մթնոլորտային օդ	15
3.2.2. Ջրային ռեսուրսներ	16
3.2.3. Հողային ռեսուրսներ	16
3.2.4. Կենսաբազմազանություն	16
3.2.5. Սոցիալական խնդիրներ	16
3.2.6. Փոխհատուցում	17
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	20

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Բաղրամյան բիլդինգ» ՍՊԸ, որի գրասենյակի հասցեն է՝ ք. Երևան, Բաղրամյան պողոտա 41, բն.9:

Նախատեսվող գործունեության վայրը՝ ք. Երևան Բաղրամյան պողոտայի թիվ 37/39 հասցե:

Կազմակերպությունը մասնագիտացված է քաղաքացիական շինարարության բնագավառում:

1.2 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ բազմաբնակարան շենքի կառուցում: Նախագիծը կատարված է համաձայն պատվիրատույի առաջադրանքի՝ հիմք ընդունելով ճարտարապետահատակագծային առաջադրանք N.50/2-15913-915-ը: Նախագիծը ներկայացված է ի լրումն N.50-05/2-24591-1331, 27.12.07 համաձայնեցված նախագծի:

Նախագիծը նաև ենթարկվել է քաղաքաշինական փորձաքննության՝ «Քաղսեյսմշին և Փորձաքննություն» ՍՊԸ (լիցենզիա հ.7955 և հ.8193) ՈՓ-368 եզրակացություն:

Տարածքի մակերեսը կազմում է 2750 մ², կազմված է երկու մասից, համապատասխանաբար՝ 1650 մ² և 1100 մ²:

Կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 1562.6 մ², այդ թվում 1417.6 մ² բնակելի շենքի:

Նախագիծը և տարածքի փաստաթղթերը սկզբնական փուլում մշակվել էին «Վալենսիա» ՀԶ ՓԲԸ անունով: 2013 թվականին կազմակերպությունը վերագրանցվել է «Բաղրամյան բիլդինգ» ՍՊԸ անվանումով՝ որպես Վալենսիա ընկերության իրավահաջորդ: Տարածքի սեփականությունը նույնպես գրանցվել է «Բաղրամյան բիլդինգ» ՍՊԸ անունով: Գրանցման վկայականի, ինչպես նաև տարածքի սեփականության փաստաթղթերի պատճենները կցվում են սույն հայտի հավելվածների մասում:

1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Գործունեության ազդեցության գնահատումը և իրավական դաշտը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, Երևան քաղաքի Բաղրամյան պողոտա 37/39 հասցեում նախատեսվող բնակելի շենքի կառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ²-ը (կառուցապատվող հողամասի մակերեսը կազմում է 2750 մ², իսկ շինության և ենթակառույցների ընդհանուր մակերեսները 1562.6 մ²:

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հայտում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,

Շինարարության փուլում մերձակա բնակչությանը /Երևան համայնք/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,

Շինարարական մեքենաների և տեխնիկայի աշխատանքով պայմանավորված տեղի երթևեկության ինտենսիվացում,

Հողերի դեգրադացիա և էրոզիա շինարարական աշխատանքների արդյունքում,

Հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատանքների ընթացքում,

Հողերի աղտոտում՝ շինարարության և շահագործման ընթացքում առաջացող թափոններով, շինարարական և կենցաղային աղբով,

Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում

Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում:

Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Երևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.3.2 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Բազմաբնակարան բնակելի համալիրը գտնվում է Բաղրամյան 37, 39 հասցեում: Հողհատկացման մակերեսը՝ 2750.0 մ², կառուցապատման մակերեսը՝ 1417.6 մ²: Ընդհանուր շինարարական աշխատանքների տևողությունը 142 շաբաթ է: Տարածքի նախապատրաստումը՝ 1 շաբաթ: Հողային աշխատանքներ՝ 10 շաբաթ, հիմքի շինարարություն՝ 6 շաբաթ, ինժեներական ցանցերի կառուցում՝ 4 շաբաթ:

Քանդման ենթակա են հատկացված տարածքում առկա 1-2 հարկանի բնակելի տները: Կառույցը իր քաղաքաշինական դիրքորոշմամբ պահպանում է Պռոշյան փողոցի անկյունում 17 հարկանի բնակելի շենքի դիրքը, որը տեղադրված է կարմիր գծից մոտավորապես 10մ հետ: Բնակելի շենքի կոմպոզիցիան անգլերեն H-աձև ծավալ է, որը պետք է բաղկացած լինի 20 վերգետնյա և 2 տեխնիկական հարկերից: Նկուղային հարկերը ամբողջությամբ ընդգրկում է ավտոկանգառներ 218 մեքենաների համար: Մուտքը դեպի ավտոկանգառներ կազմակերպված է Բաղրամյան փողոցից դեպի ներս ընկած մասից: Վերգետնյա առաջին և երկրորդ հարկերը նախատեսված են հասարակական օգտագործման համար: Երրորդ հարկից սկսած տեղադրված են բնակարանները:

Ծավալատարածական լուծումը տրված է այնպես, որ Բաղրամյան փողոցին նայող ճակատը բաժանվում է երեք ուղղածիզ ծավալների, որով շենքը իր մասշտաբով ընթեռնելի է դառնում տվյալ փողոցի հորինվածքում: Կողային ճակատները նույնպես բաժանվում են երեք ուղղածիզ ծավալների՝ միջին ապակեպատ ծավալի առկայությամբ: Շենքի ընդհանուր ծավալը ավարտվում է շենքը շրջապատող արևապաշտպան ստրուկտուրաներով: H-աձև ծավալի ներքին մասում հանդիպակաց են բնակարանների խոհանոցների և անկյունային ընդհանուր սենյակների պատուհանները 19 մետր հեռավորությամբ:

Բաղրամյան փողոցի կողմից, շենքի միջին հատվածում, երկու հարկի բարձրությամբ, նախատեսվել է անցում, որտեղից կազմակերպված է մուտքը դեպի բնակելի հատված: Անցումի մեջ են բացվում նաև էվակուացիոն աստիճանավանդակների մուտքերը: Բնակելի հատվածի մուտքը կազմակերպվել է անցումի կենտրոնական հատվածում գտնվող բլոկից: Թափանցիկ վերելակները ճակատում ընդգրկված են մեկ ընդհանուր ապակյա ծավալի մեջ: Բնակելի յուրաքանչյուր հարկում վերելակները բացվում են նախամուտքի մեջ, որտեղ բացվում են

նան էվակուացիոն պատշգամբների մուտքերը: Երկու կողմերում գտնվող միջանցքները տանում են դեպի բնակարաններ:

3-16-րդ հարկերում կրկնվում են բնակարանների հետևյալ տիպերը՝ յուրաքանչյուր հարկում կան 4 հատ մեկ սենյականոց, 2 հատ 2 սենյականոց, 4 հատ 3 սենյականոց և 2 հատ 4 սենյականոց բնակարաններ: 17 և 18-երորդ հարկերում կողային ճակատներին կից նախատեսվել են երկհարկանի բնակարաններ: Այսպիսով՝ առկա են երկու երկհարկանի բնակարաններ, իսկ մնացած մակերեսը զբաղեցնում են յուրաքանչյուր հարկում՝ 4 հատ 4 սենյականոց և 2 հատ 3 սենյականոց բնակարաններ: 19 և 20-երորդ հարկերում յուրաքանչյուր հարկում կան 4 հատ 5 սենյականոց, 2 հատ մեկ սենյականոց և 2 հատ 3 սենյականոց բնակարաններ: Բնակարաններում ապահովված են երկկողմանի օդափոխության և արևահարման նորմերը:

Արտաքին հարդարանքը մինչ զրոյական նիշը նախատեսվում է երեսպատել բազալտի սալիկներով, իսկ մնացած մակերեսը՝ 1-1.5 սմ տրավերտինով: Հարթ տանիքածածկերի ջրամեկուսացման համար նախատեսված է ֆրանսիական <<Siplast>> ֆիրմայի արտադրության տանիքածածկույթ: Բոլոր արտաքին վիտրաժները և պատուհանները այլումինե շրջանակներից են երկշերտ ապակեկապոցներով: Միջնորմները նախատեսված են 400x200x90մմ բետոնե բլոկներից և գիպսաստվարաթղթից հատուկ մետաղական պրոֆիլավոր կմաղքով:

Շենքում նախագծվել է սառը ջրի ջրամատակարարման և կոյուղու ցանցեր: Սառը ջրի սնուցումը կատարվում է քաղաքային ջրմուղի 200մմ տրամագծով ցանցից, որն անցնում է կից տարածքով: 108x4մմ խողովակով ցանցի վրա՝ դիտահորի մեջ, տեղադրվում է 80մմ տրամաչափի ջրաչափ և ֆիլտր: Ցանցի միացման տեղում՝ դիտահորի մեջ, նախատեսված է հակահրդեհային հիդրանտ և փական: Ցանցերի համար կիրառված են մետաղական խողովակներ: Նախատեսվում է 200մմ ջրագծի շրջանցում: Ներքին ցանցի միջոցով կենցաղային կեղտաջրերը սան-սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում են կոյուղու բակային ցանց: Ցանցերի համար կիրառված են թուջե խողովակներ: Կոյուղու բակային ցանցը նախատեսված է միացնել քաղաքային կոյուղու 500մմ կոլլեկտորին, որն անցնում է կից փողոցով:

Ջրամատակարարման և կոյուղու միացման համար առկա է Վեոլիա ջուր ընկերության տեխ.պայմանը /կցվում է հավելվածների մասում/:

1.3.3 Հողային աշխատանքներ

Խրամուղու մշակում՝ $212+100 = 312\text{մ}^3$

Ավազի նախապատրաստական շերտ՝ 16մ^3

Ետլիցք խրամուղի՝ 212մ^3

Ավելորդ հողի տեղափոխում՝ 100մ^3

Փափուկ հողի տեղափոխում և ետլիցք 40 մ³

Ասֆալտի ծածկույթի վերականգնում 145 մ²

Բետոնի հատակի աստիճանների քանդում և վերականգնում 136 մ²/33.3 մ³:

1.3.4 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական աշխատանքների ժամանակ կօգտագործվեն բետոնային խառնուրդ, շինանյութեր, կոնստրուկցիաներ և այլ նյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացվում են աշխատանքային նախագծի կազմում:

Բնական ռեսուրսներից օգտագործվում է ջուր՝ տարածքի ջրցանի, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Ջրի ծավալները ներկայացված են սույն հայտի համապատասխան բաժնում:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Տեղադիրքը

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը գտնվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բնակելի գոտում՝ Բաղրամյան պողոտայի թիվ 37 և 39 հասցեում:

2.2 Կլիման

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է <<տաք>> կլիմայական գոտում: <<Տաք>> գոտու կլիմայական բնութագրերն են՝ ամառ՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21 °C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ՝ միջին արագությունը 2,0-3,0 մ/վ : Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0 °C-ց մինչև մինուս 5 °C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0-3,0 մ/վ:

Հյուսիս- արևելյան և հարավ-արևելյան քամիները ավելի շատ են ապրիլին, հարավ-արևմտյան քամիները՝ հունիսին, հյուսիս-արևելյան քամիները՝ հուլիսին, հարավ-արևելյան քամիները՝ հոկտեմբերին:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Էրեբունի	888	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-2.8	42

Աղյուսակ 2.2 Օդի հարաբերական խոնավությունը օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Էրեբունի	888	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Էրեբունի	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	58	47
	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51		

Աղյուսակ 2.4. Քանու պարամետրերը օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անողմությունների կոնկետություն, %	Միջին ամսական ատատումում/վ	Միջին տարեկան ատատումում/վ	Ուժեղ քամիներով (Պ. 15մ/վՊ. օտեռի ռամակո	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
															16	17	18
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Էրեբունի	912.1	Հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	1,5	29	22	27	29
			2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7							
		Ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1,9					
			3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6							
		Հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8					
			5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3							
		Հոկտեմբեր	6	17	10	10	21	20	10	5	63	1,0					
			2,9	2,5	2,1	2,5	2,3	2,4	2,9	3,5							

2.3. Մթնոլորտային օդ

Օդային ավազանը Երևանում հիմնականում կրում է տրանսպորտային միջոցների ազդեցությունը:

Հայաստանի Հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածության պարբերական դիտացանցը/մոնիթորինգը իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարության <<Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական կենտրոն>> ՊՈԱԿ-ի (Էկոմոնիթորինգ) կողմից:

2017 թվականին Երևան քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործել է շարժական պասիվ նմուշառման 46 դիտակետ և յոթ ստացիոնար դիտակայան (№1, №2, №7, №8, №16-1 №18 և №19), որից երկուսում՝ №2 և №18 կատարվել են միայն ակտիվ (24-ժամյա), իսկ մնացած հինգ դիտակայանում (№1, №7, №8, №16-1 և №19)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2017 թվականի ընթացքում Երևանում ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 9626, պասիվ նմուշառմամբ՝ 4158 փորձանմուշ, ավտոմատ եղանակով կատարվել է 330814 դիտարկում:

Որոշված ցուցանիշների տարեկան միջին կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ):

2.4. Ջրային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում: Հրազդան գետի վերին ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս): Գետաբերանի հատվածներում /Երևանից ներքև/ ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս): Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է՝ (5-րդ դաս): Վատ որակը պայմանավորված է լուծված թթվածնի, ԹԿՊ₅, ամոնիում իոնի, ֆոսֆատ իոնի, մանգանի, վանադիումի, ընդհանուր ֆոսֆորի բարձր պարունակությամբ:

2.5. Հողային ռեսուրսներ

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ներկայացվող տարածքը ամբողջությամբ կառուցապատված է և այստեղ բաց հողային մակերեսներ չկան:

2.6. Կենսաբազմազանություն

Տարածքը գտնվում է Երևան քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջությամբ կառուցապատված շինություններով, ուստի այստեղ բուսականություն կամ վայրի կենդանիների բնակատեղիներ չկան:

2.7. Սոցիալ տնտեսական պայմանները

Ներկայացվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Բաղրամյան պողատայի վրա: Ստորև բերված են Երևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից¹:

Աղյուսակ 2.5. Երևանի ընդհանուր ցուցանիշները

N	Տարածքը	223 քառ. կմ
1	ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 351.2 հա
3	այդ թվում՝ վարելահողեր	915.6 հա
4	Վարչական շրջաններ	12
5	Բնակչության թվաքանակը 2015թ. տարեվերջի դրությամբ	1 073.7 հազ. մարդ
6	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2015թ.	35.8 %

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

¹ www.armstat.am

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2017թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 2.6 Երևանի տնտեսության համամասնական տվյալները

✓ արդյունաբերություն`	41.2%,
✓ գյուղատնտեսություն`	1.1%,
✓ շինարարություն`	63.7%,
✓ մանրածախ առևտուր`	76.4%
✓ ծառայություններ`	81.4%:

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրանի տարածքում:

Արաբկիր վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին:

Տարածքը՝ 1 324.99 հա

Բնակչությունը՝ 117 704 մարդ²

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

3.1. Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- քանդված շինության և ծածկի, ինչպես նաև շինադրի տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

ա. Մթնոլորտի աղտոտում.

Փոշու արտանետումներ կառաջանան հոյություն ունեցող 1 – 2 հարկանի տների քանդման, ինչպես նաև հիմքերի փոշման, հողային աշխատանքների ժամանակ:

Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ վառելիքի այրման արդյունքում կառաջանան ազոտի և ածխածնի օքսիդների արտանետումներ:

բ. Աղմուկ

Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում կավելանա աղմուկի մակարդակը:

² <https://www.yerevan.am/am/districts/arabkir/>

գ. Թափոններ

Գոյություն ունեցող 1 – 2 հարկանի տների քանդման արդյունքում կառաջանան բետոնային կառույցների, քարի, ապակու և տանիքների թափոններ, որոնց ընդհանուր ծավալը գնահատվում է 1200 – 1500 մ³ սահմաններում:

Հողային աշխատանքների արդյունքում, ետլիցքից հետո կառաջանա 100 մ³ գրունտի ավելցուկ:

Քանդման թափոնները և գրունտի ավելցուկը կտեղափոխվեն Երևանի քաղաքապետի կողմից հատկացված աղբավայր:

դ. Ջրային ռեսուրսներ

Շինարարության ժամանակ ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանի և աշխատողների խմելու կենցաղային նպատակների համար:

Ջրցանի համար օրական նախատեսվում է օգտագործել օրական 0.4 մ³ ջուր, ամբողջ շինարարության համար կկազմի՝ 56 - 57 մ³ ջուր:

Խմելու կենցաղային նպատակների համար՝ 1.5 մ³ օրական, ամբողջ շինարարության համար կկազմի՝ 210 - 215 մ³ ջուր:

Մինչև ջրագծերի և կոյուղու ցանից միացումը ջուրը կմատակարարվի ընկերության գրասենյակից՝ Բաղրամյան 41 հասցեում, որը գտնվում է անմիջապես շինարարության հարևանությամբ: Բանվորները ժամանակավորապես կօգտվեն նաև գրասենյակի կենցաղային հարմարություններից:

3.2. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

Սույն ենթաբաժնում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները՝ ըստ ազդեցության ուղղությունների:

3.2.1. Մթնոլորտային օդ

Շինարարական աշխատանքների ժամանակ օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:

3.2.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- բետոնի խառնուրդը կբերվի պատրաստի վիճակում,
- հողային աշխատանքների ժամանակ կիրականացվի շինհրապարակի և հանվող գրունտի ջրցան
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևույթային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

3.2.3. Հողային ռեսուրսներ

Ներկայացվող տարածքում բացակայում է ազատ հողածածկ, համապատասխանաբար չկա նաև հողի բերրի շերտ:

Շինարարության շրջակայքում հողածակի պահպանության համար նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Շինարարական նյութերի և քայուղերի պահեստները կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինադրը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված ադրավայր,
- տարածքը կբարեկարգվի:

3.2.4. Կենսաբազմազանություն

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բնակեցված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

Աշխատանքների ավարտից հետո տարածքի ազատ մասերը կկանաչապատվեն, կտնկվեն տեղի բնակլիմայական պայմաններին բնորոշ ծառեր և թփեր, ինչպես նաև սիզամարգ: Կանաչ տարածքի ընդհանուր մակերեսը կկազմի՝ 160 մ²:

3.2.5. Սոցիալական խնդիրներ

Շինարարական աշխատանքների ազդեցությունը կլինի կարճաժամկետ և ոչ բարձր: Բացի այդ, բոլոր վերը թվարկված բնապահպանական միջոցառումները ուղղված են առաջին հերթին մերձակա բնակչության առողջությանը և կենսակերպին չվնասելուն:

Պետք է հաշվի առնել, որ շինարարության ժամանակ կպահանջվի աշխատուժ, ինչը թույլ կտա ապահովել նրանց ընտանիքների համեմատաբար կայուն կենսամակարդակը:

3.2.6. Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցությանը:

Ստորև բերված է բնապահպանական ռիսկերը մեղմացնող միջոցառումների ցանկը և մոնիթորինգի պլանը:

Գործողությունները	Հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման մոնիթորինգ	Մոնիթորինգի պատասխանատուն
<i>Շինարարական աշխատանքներ</i>				
Շինարարական հրապարակի կազմակերպում	Քանդման թափոնների ազդեցություն	<ul style="list-style-type: none"> - Գոյություն ունեցող 1 – 2 հարկանի տների քանդման արդյունքում առաջացած թափոնների հավաքում և հնարավորինս շուտ տեղափոխում Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր, 	Տարածքի զննում	Շինարարության կապալառու
Շինարարական աշխատանքների իրականացում	Հողածածկի և մակերևութային ջրերի աղտոտում	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակում համապատասխան տեղեկատվական վահանակների տեղադրում - շինարարական տեխնիկայի սպասարկում և կարգաբերում Երևան քաղաքի տեխ.սպասարկման կայանում: 	Տեսչական ստուգում Տեսչական ստուգում	“Բաղրամյան Բիլդինգ” ՍՊԸ Շինարարության կապալառու
Տարածքի բարեկարգում	Հողածածկի և մակերևութային ջրերի աղտոտում	<ul style="list-style-type: none"> - Տարածքը մաքրել շինարարական աղբից - Կանաչապատել ազատ տարածքները, ընդհանուր՝ 160 մ²: 	Տարածքի զննում	“Բաղրամյան Բիլդինգ” ՍՊԸ
Բեռնատեղափոխումներ	Երթևեկության ինտենսիվացում	<ul style="list-style-type: none"> - տրանսպորտային միջոցների երթերի ժամանակացույցի մշակում և կատարման ապահովում - սորուն նյութերի տեղափոխումը իրականացնել փակ թափքերով բեռնատար մեքենաներով - բացառել բեռնափոխադրումները երեկոյան և գիշերային ժամերին 	Երթերի ժամանակացույց Արտաքին զննում Տեսչական ստուգում	Շինարարության կապալառու Շինարարության կապալառու Շինարարության կապալառու

Աշխատանքի անվտանգություն	Վթարներ և դժբախտ պատահարներ	<ul style="list-style-type: none"> - Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Աշխատակազմի պարբերական հրահանգավորում և աշխատատեղերի ստուգում - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն 	Տեսչական ստուգում Տեսչական ստուգում	Շինարարության կապալառու “Բաղրամյան Բիլդինգ” ՍՊԸ
--------------------------	-----------------------------	---	--	---

Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է նախագծային աշխատանքների արժեքի 10 – 1.2% շրջանակներում:

Աղյուսակում ներկայացված միջոցառումների մեծ մասը կատարվում է ընդհանուր շինարարական աշխատանքների կազմում: Ջրցանի միջոցառումների համար ծախսերը կկազմեն՝ 50.0 - 60.0 հազ.դրամ, զգուշացնող վահանակների և ցուցանակների գինը՝ 120.0 հազ.դրամ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. Հունիսի 21:
- ԱԶԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
 - Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
 - Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
 - Усредненные нормы водопотребления и водоотведения. Москва, 1981
 - ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
 - [Www.arlis.am](http://www.arlis.am)
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:



Կառուցապատվող տարածքի իրադրային սխեմա